## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատի համայնքապետարան, գյուղ Ջրառատ 1-ին փողոց շենք 2,
հեռ. 098 919 523 Էլ. փոստ Jrarat.kotayq@ mta.gov.am

18.10.2017թ. N 147
Ձեր________N ________

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝
ՊԱՐՈՆ Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

*Հարգելի պարոն Պետրոսյան*

Հայտնում ենք տեղեկատվություն 2017թ. հոկտեմբերի 12-ից - 17-ը ընկած ժամանակահատվածում Ջրառատ համայնքի ղեկավարի կողմից կայացված որոշումների վերաբերյալ:

Առդիր 1 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՍԱՏՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրառատ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Ջրառատ, (098) 919523, jrarat.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017թվականի N 38

## ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N 5-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի, հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2017թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 01/15.1/ 4596-17 գրությունը՝ ***որոշում եմ.***

1. Ջրառատ համայնքի ղեկավարի 2016թվականի փետրվարի 14-ի <<Համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին>> թիվ 5-Ա որոշման հավելվածով հաստատված համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության 3.2-1 ծածկագրով պաշտոնի անձնագրում կատարել հետևյալ լրացումները. -
<<11-րդ կետի>> լ/ ենթակետից հետո լրացնել նոր խ/ ենթակետը՝ հետևյալ բովանդակությամբ.- խ/ իրականացնում է հսկողություն ընդհանուր օգտագործման տարածքներում բարեկարգման կանոնների պահպանմանը, կանաչ գոտիների պահպանությանը, աղբահանության աշխատանքները ժամանակին կազմակերպմանը, չսահմանված վայրում աղբի թափման, աղբահանության համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը և առաջարկություն է ներկայացնում համայնքի ղեկավարին, խախտումներ թույլ տված իրավաբանական և ֆիզիկական անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՍԱՏՐՅԱՆ

20 __ թ . ______________ _____
գ .Ջ ր առ ատ